ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 սեպտեմբերի 2024 թվականի N 1445-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N 884-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի «Ամպայինն առաջինը» քաղաքականության մշակման և ներդրման մասին» N 884-Լ որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 1-ին կետի 4-րդ ենթակետը «ձեռնպահ են մնում» բառերից հետո լրացնել «սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջներին համապատասխանող» բառերով.

2) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3.1-ին և 3.2-րդ կետերով՝

«3.1. Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից չորսամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության հետ համատեղ մշակել ամպային ծառայությունների մատուցման պետական գնման գործընթացի մեթոդաբանություն և ուղեցույց:

3.2. Սահմանել ամպային տիրույթում պաշտոնական կայքերի տեղակայման անվտանգության նվազագույն պահանջները՝ համաձայն հավելվածի։».

3) որոշումը լրացնել հավելվածով՝ համաձայն հավելվածի։

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

12.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ